ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ 25 մարտի 2022թ. ժամը 15:30 **ք. Սպիտակ**

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 27 անդամներից 15-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Արտակ Մաթոսյանը, Հայկ Սիսակյանը, Ալվարդ Համբարյանը, Կարեն Հայրապետյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Աննա Աջամյանը, Սամվել Սիմոնյանը, Նունե Էհտիբարյանը, Զալիկո Համբարյանը, Արամայիս Փիլոյանը, Վահե Ղազարյանը, Նարինե Հակոբյանը, Արկադի Ասատրյանը, Սասուն Ասատրյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 12 անդամներ՝ Համլետ Մազմանյանը, Լուսինե Ավետիսյանը, Մարտին Հաջյանը, Գագիկ Յայլոյանը, Կարեն Սարգսյանը, Կարինե Դիլաքյանը, Վարդուհի Թումանյանը, Գագիկ Սահակյանը, Թամարա Լամբարյանը, Սարիբեկ Ամիրյանը, Գուրգեն Փիլոյանը, Մանուշ Աթյանը, /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Ազգանուշ Ֆրանգյանը, Սպիտակ համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 25-ի արտահերթ նիստի օրակարգի նախագիծը:

Օրակարգի հարցերի վերաբերյալ առարկություններ, առաջարկություններ չեղան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 25-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատում իրականացնելու ծրագիրը հաստատելու մասին

(Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան)

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատում իրականացնելու նպատակով ինքնագնահատման աշխատանքային հանձնախումբ ձևավորելու մասին

(Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան)

Օրակարգը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

1. ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՔՆԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ)

Զեկուցողը հանգամանորեն ներակայացրեց նիստի օրակարգի երկու հարցերի ձևավորման հիմքը՝ մասնավորապես.

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 21.01.2022թ. թիվ ԳՍ//1370-2022 հանձնարարականի և ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի №1332-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 7-րդ միջոցառման կիրարկման ապահովման նպատակով՝ որպես մեթոդական աջակցություն տրամադրվել է «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու և գնահատման արդյունքում տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր կազմելու մեթոդաբանություն և գործողությունների ծրագիր» ձեռնարկը՝ առաջարկելով ձեռնարկի հիման վրա մշակել հակակոռուպցիոն միջոցառումների

ծրագիր: Այնուհետև, ի լրումն այդ գրության, պահանջվել է ապահովել ինքնագնահատման աշխատանքային հանձնախմբի ստեղծումը, ավարտել տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի մշակումը և մինչև 2022 թվականի մարտի 25-ը ներկայացնել տեղեկատվություն գործընթացի իրականացման վերաբերյալ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու համար: Այստեղից էլ առաջացել է արտահերթ նիստ հրավիրելու անհրաժեշտությունը:

Այնուհետև զեկուցողը հակիրճ նկարագրեց ծրագիրը.

Սույն ծրագրով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատում իրականացնելու հետ կապված իրավահարաբերությունները: Կոռուպցիոն ռիսկերի գնահատումն իրականացվում է ինքնագնահատման գործիքի միջոցով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող հսկողության, կոռուպցիոն ռիսկերի գնահատման անկախության, օբյեկտիվության, հանձնախմբի անդամների ազնվության, կարողունակության, գաղտնիության, անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

Հարցեր, առաջարկություններ չեղան:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատում իրականացնելու ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

2.ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՒՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

Շարունակելով զեկույցը՝ աշխատակազմի քարտուղար Ազգանուշը Ֆրանգյանը նշեց, որ երկրորդ հարցը առաջին հարցի տրամաբանական շարունակությունն է:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատում իրականացվելու է ինքնագնահատման աշխատանքային հանձնախումբ ձևավորելու միջոցով: Հանձնախմբի կազմում կարող են ընդգրկվել համայնքի ավագանու անդամներ, համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, իրավաբան, ֆինանսատնտեսական պատասխանատու, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, տեղական ինքնակառավարման ոլորտի փորձագետ, այլ անդամներ՝ ավագանու որոշմամբ: Հանձնախմբի անդամների թիվը և անավանական կազմը սահմանվում է ավագանու որոշմամբ:

Ավագանու անդամ Սասուն Ասատրյանը առաջարկեց հանձնախմբի կազմում ընդգրկել նաև այլ կուսակցություններից անդամներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշման՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատում իրականացնելու նպատակով ձևավորել ինքնագնահատման աշխատանքային հանձնախումբ հետևյալ կազմով.

1) Քաջայր Նիկողոսյան՝ Սպիտակ համայնքի ղեկավար.

2) Կարեն Սարգսյան՝ Սպիտակ համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ).

3) Ազգանուշ Ֆրանգյան՝ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ) - ինքնագնահատման խմբի աշխատանքները համակարգող անձ.

4) Վարուժան Ապրեսյան՝ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ).

5) Նորայր Յարմալոյան՝ իրավաբան (համաձայնությամբ):

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆՆԱ ԱՋԱՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ